

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ:

Ուղարկելու համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրքում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարապարտադիր գինում են ուղարկել:

Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատանը րոպէս 10—2 ժամ

(բացի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են:

Խրատանիստ րոպէս 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները—ՆԵՐՔԻՆ, ՏԻՍՈՒԹԻՆ, ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ, ԱՆՂԼԻԱՐ ՖՐԱՆՏԻՍԱՐ, ԳԵՐՄԱՆԻԱՐ—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ, — ԷՆՈՒԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ, ՆԵՐ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Հայ պանդուխտ առողջական վիճակ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՍԽՈՒՆՔՆԵՐ

Այժմ աւելի և աւելի յայտնվում է թէ Թիւրքիան անկեղծ չէր հայոց խնդրի վերաբերութեամբ:

Թիւրքիան ինքն ծածուկ կերպով գրգռեց անկարգութիւնները եգիպտոսում—յետոյ պատասխանում է պետութիւններին, որ առ ժամանակ պէտք է յետ գցի հայոց խնդրի լուծելը, որովհետեւ իր ամբողջ զիջումն առնելով զբաղված է այժմ եգիպտոսական հարցով: Թիւրքիան ինքն նպատակում էր քիւրդերի արշաւանքներին պարսից սահմանների վրա, — իսկ այժմ պատասխանում է ռուսաց կառավարութեանը, որ շատ ցաւում է թէ չէ կարող անյապաղ ձեռք տալ Հայաստանի մէջ ընթացող մոգնելու գործին, քանի որ քիւրդերը խաղաղացած չեն դեռ եւս, որովհետեւ բարենորոգումների մոգնելը ապարդիւն կը լինի, քանի որ երկիրը դեռ եւս խռովութեան մէջ է:

Մի լաւ ապացոյց նոյնպէս որ Օսմանեան պետութիւնը անկեղծ չէր հայոց խնդրի լուծման վերաբերութեամբ, այն իրողութիւնը կարող է լինել, որ Վիէնայի մէջ հրատարակվող ֆրանսիական «Ժուրնալ դ'Օրիան» շաբաթաթերթը արգելվեցաւ Թիւրքիայում, չէր նայելով որ այդ լրագիրը իր բոլոր յօդուածներում հայոց խնդրի վերաբերութեամբ երբեք մի խիստ խօսք ասած չէ նոյն իսկ Թիւրքաց բարձր կառավարու-

թեան կամ Սուլթանի դէմ, ընդհակառակն խօսելով դաւաճական պաշտօնեաների դեմ—Ժուրնալի և քիւրդ աւազակների հարստահարութիւնների մասին, մի նոյն ժամանակ աշխատում էր համոզել Թիւրքաց կառավարութեանը թէ Հայաստանի մէջ ընթացող ներքին մոգնելը և հայոց ազգի պէս մի հաւատարիմ, ընդունակ և աշխատասէր ազգի օրինական պահանջների բաւականացնելը, տալով նրան նահանգական, վարչական ինքնավարութիւն,—օգուտ է նոյն իսկ Թիւրքաց կառավարութեանը: Երբ նահանգները բարեկարգ, բարգաւաճ կը լինեն, այն ժամանակ և ամբողջ պետութիւնը հարուստ, բարեկարգված և երջանիկ կը լինի,—ասա այս էր «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի պրինցիպը:

Եւ այնու ամենայնիւ, այդ լրագիրը, որ հայերի օգուտները պաշտպանելով, պաշտպանում էր նոյն իսկ Թիւրքիայի շահերը, արգելվեցաւ Թիւրքիայում:

Պարզ է, ուրեմն, որ Բ. Դուռը անկեղծ չէ դէպի հայոց խնդիրը, եթէ իր շահերը չէ ըմբռնում և ուրեմն ոչ բարեկարգութիւն է կամենում մոգնել Հայաստանի մէջ, ոչ էլ այդ մասին լսել մի խօսք անգամ ուրիշների ընդմէջ: Պարզ է, ուրեմն, որ Թիւրքիայի միակ նպատակն է հայոց տարրը կատարելապէս ջնջելու աշխարհիս երեսից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարում արտատպում ենք «Մասիս» լրագրից գոտոր փնջութիւնների «Հայ

դուռներու վարած կեանքն, որք յատկապէս զբաղած չեն առողջապահութեան փափուկ և կարեւոր խնդրոց հետ, չը կարեն երեւակայել անգամ թէ ինչ է այդ տաժանելի, հակամարդկային կեանքն զոր կը վարեն նորա օտար քաղաքացի մէջ, Այն հանգամանքներն որք բազմատեսակ ժամտական, հիւծիչ հիւանդութիւններ կարտադրեն անպատճառ, անմաքրութիւն, օդի անբաւականութիւն և նեխումն, սնունդի պակասութիւն կամ անընտրողութիւն, մի պանդուխտներն նոցա ենթարկեալ են կատարելապէս, որք զօրեղ մի աշակից գտնելով նաև բարոյական ընկճման մէջ, որ ամեն հայրենազերծ թշուառութիւնն է, լուրի բայց անընդհատ հայրենեաց յոյսերն և ընտանեաց շեղակներն յերկիր կը տապալեն:

Այս աննպաստ հանգամանաց հաւասար չարաբեր է բազմաբնակ և այլաբնի քաղաքներու մէջ տիրող բարոյականութեան մակերևոյթն, որ փոխանակ միամիտն նողկանք պատճառելու, մի գիւրմառայելի հրապոյր կընծայէ նմա Պանդուխտին համար անպարկեշտութեան, մոլութեան գոյութիւնն կամ աստիճանն երկրին անունէն կախեալ է: Ինչ որ այսպանելի էր և մեղք կը համարուէր իւր գիւղին մէջ, կը կարծէ թէ մայրաքաղաքին մէջ չէ մեղադրելի և ոչ քրեական յանցանք կարգին: Այս համոզման կցորդեմք նաև մեծ կեդրոններու մէջ ընդհանրացած չար օրինակներն, և կարեմք հասկանալ թէ մի երիտասարդ, որ իւր մանկութիւնն անցուցած է ժու-

պանդուխտաց առողջական վիճակ վերնագրով յօդուածը:

Սեղ հաղորդում են հետեւեալը, «Թիֆլիսի» կաթողիկէ սուրբ Գեորգի եկեղեցու ուստաւորների սենեակները բոլորովին նորոգել է տուել այդ եկեղեցու երեցփոխանը: Բայց այդ սենեակների ահագին արդիւնքը մոտում է մինչև այսօր տէր-Գեորգ քահանայի ձեռքը: Թեմական տեսչութիւնը հաստատվելուց յետոյ այդ քահանան, որպէս համառ ուսուցիչ, զրկվեցաւ այդ եկեղեցու դպրոցների մէջ ուսուցչի պաշտօնը վարելուց, Բայց քահանան աշխատեց փակել տալ օրիորդաց դպրոց, իսկ այժմ և տղայոց դպրոցն էլ փակվում է: Ո՛ր են գնում արդիւնքները, յայտնի չէ: Ամենքին յայտնի է որ սուրբ Գեորգի եկեղեցին Թիֆլիսի առաջին եկեղեցին է և այնքան արդիւնք ունի, որ կարող է ոչ թէ միայն երկու դասարանից բաղկացած դպրոց պահել և դպրոցի վրա յատկացնել, ինչպէս այժմ, 1200 րուբլ, բայց կարող էր իր արդիւնքով պահպանել մի պրոգիմազիա անգամ, ջարմանալին այն է որ տէր Գեորգի արածի վրա մինչև այժմ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձրել: Միթէ երեցփոխանն էլ այդ բոլոր անկարգութիւնների վրա ուշադրութիւն չի դարձրել և չի բողոքել դրա դէմ: Պարոնի ուշադրութիւնն ենք դարձնում և այն բանի վրա, որ եկեղեցու բեմի ետեւ չինված են մի քանի արտաքիններ ուստաւորների համար, դա շատ անվայել բան է:

«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է որպէս լուր, որ պետական բարձր շրջաններում յարաբերւած է հարց թույլ տալ նահանգական գէմստօնների ընտրված անձինքներից մի քանիսներին պետական խորհրդի մէջ անդամ համարվել: Ասում են որ այդ ընտրված անդամները կը մասնակցեն պետական խորհրդի նիստերին այդ խորհրդի եղած անդամների հետ հաւասար իրաւունքով: Բայց դեռ եւս յայտնի չէ թէ որքան թւով կը լինեն այդ նոր անդամները համեմատելով թագաւոր կայսրից նշանակված անդամների թւի հետ:

կալ կենօք, օղաւէտ վայրերու, առաքինի մի շըրջանի մէջ և մեծերու հսկողութեան ներքեւ, ինչ կերպով կենցաղելու տրամադրի է, ճիշդ այն պահուն ուր կիւրքերն կը զարթուն և երբ նա մոռացութեան մէջ և եթ կորոնէ իր ցաւոց սր-փոփանքն:

Սակաւաթիւ են յոյժ և Պոլսոյ այն պանդուխտներն որք պատահամբ մի բացառիկ դրութեան մէջ կը գտնուին: Նոքա իսկ որք մասնաւոր տուններու մէջ կը ծառային, տանն ամենէն վատառողջ անկիւնն կը բնակին: Տունին մէջն են, բայց տունէն չեն: Իսկ մեծագոյն մասն խռնուած խանութ, բաղնիքներու, գոց կրպակներու մէջ, ուր արեգակն մուտք չունի, ուր օդն չըջան չունի, գիշերուան հանգստութիւնն կը խնդրեն այն տաժանելի հոգնութեան փոխարէն որ ունեցել են ցերեկն, օդային ամեն անհարթութեանց ենթարկեալ:

Բանւոր պանդուխտներուն քաջառողջութեան աննպաստ մի պարագայ է նաև նոցա թէ մարմնոյն և թէ բնակութեանց յետին ծայր անմաքրութիւնն, որոց վերայ մի գաղափար ստանալու համար պէտք է, արհեստական պարտաւորութեան մեղքը, բռնկացս պէս ի մօտոյ զայն ստուգելու առիթն ունենալ: Թող պատմեն մեր ազգային արհեստակիցներն թէ ինչ զգացում է որ որ կը պատէ իւրեանց անձն, Երբ կայցելեն այդ արտագոյացուցիչ որջերն, և ինչ պայքար է ահա գիտական ուշադրութիւնն կը խառնի այն

ՇԱՄԱՐԻՆՑ մեզ գրում են որ այդ քաղաքի հասարակական կեանքի մէջ ոչինչ միտքարական բան չէ նշմարվում. քաղաքի փողոցները անկարգ դրութեան մէջ են, վաճառականութիւնը շատ ընկած է, քաղաքի չըջականերում յաճախ պատահում են աւազակութիւններ ու մարդասպանութիւններ: Բացի նրանից առաջին պիտոյքի միջերկրները շատ թանկացել են և վերջապէս քաղաքում և շրջականերում տիրում է կարմրուկ հիւանդութիւնը, որ մանուկներից շատ զոհեր է տանում: Թղթակիցը աւելացնում է որ Շամախու հայ հասարակութիւնը բաժանված է երկու հակառակ, միմեանց թշնամի կուտակցութիւնների վրա, որոնք միմեանց վնասում են ամեն ազգային գործերում:

Մի հաւարարցի պարոն մեզ հաղորդում է որ Հաւարարի հայ քահանաների մեծ մասը, ինչ որ աղատ ժամանակ են գտնում, հաւաքվում են հրապարակի վրա և զբաղվում են դարգակիւսութիւններով: Նամակագիրը հարցնում է՝ արդեօք տէր-հայրերը անելի լաւ պարագմունք չեն կարող գտնել, մանաւանդ լաւ գիտնալով որ հաւարարցիները կարօտ են իրանց հովիւների օգնութեան, բարոյապէս և մտաւորապէս դարգանալու համար:

ԱԽԱՅԻՍԱՅԻՑ մեզ գրում են: «Մեր քաղաքի հայոց դպրոցներում մեծ զեղծումներ են գործվում, թէ և գրեթէ ոչ ոք չէ գրում այս մասին մեր լրագիրներում: Խեղճ վարժուհիները շատ անգամ, առանց որ և է պատճառի, գուցէ միայն այն պատճառով որ չը կարողացան դուր գալ այս կամ այն տեսիլն, կամ նշանակութիւն ունեցող վարժապետին, կամայական կերպով արձակվում են դպրոցներից: Վարժապետներից մի քանիս չեն կարող թողնել նահապետական սովորութիւնը անխնայ ծնեւել աշակերտներին և աշակերտութիւններին: Դպրոցների հոգաբարձուների ժամանակը լրացել է, բայց նրանք չեն կամենում հաշիւ տալ»:

ԲՈՒԹԱՅԻՆՑ մեզ գրում են: «Այստեղ լուր է տարածվել, որ իւր թէ Սամբուկի կողմը, որ գտնվում է Գուլիստիսի և Փօթիի մէջ, հրեանե-

տխարներ յասման հետ որ կը ծնուցանէ այն տեսարանն ամեն հայու:

Եւ թող չը կարծեն թէ սուր և երկարօրեայ հիւանդութիւններն պատահական բանն են այդ խեղճերու մէջ, Նոցա ընդգիմակացութիւնն ոչ աւելի է արտաքին հանգամանաց քան զիւրա-կեաց քաղաքացւոյն: Նոքա որք կը տեսնեն փողոցներու անկիւններն յաղթանալով և քաջառողջ բեռնակիրներ, չը կասկածին թէ քանիներ են կան որք կը հեծեն անդին, և թէ քանիսն այսօր նոցա տեսածներէն, կը կրեն արդէն իւրեանց մարմնոյն խորերն մի անբուժելի ախտի բողբոջն: Ենթարկեալ լինելով ամեն ակարացնող հանգամանաց, արեցողութիւնն ևս նոցա օգնութեան գալով, կարելի չէ որ երկար առնել պահն նոքա այն քաջառողջութիւնն որ բերել են իւրեանց հետ իւր միակ դրամադուլուս և զոր վաղ կամ անագան պիտի կորուսանեն:

Ըստ մեր մասնաւոր գիտողութեանց և ըստ վկայութեան մեր ազգային արհեստակցաց, սուր հիւանդութեանց հաւասար են նաև նոցա ստացած երկարօրեայ ախտներն: Նշանակալիս հիւանդութիւններէ առատ մի բաժին ունին պանդուխտներն, վասն զի ուրիշներէ աւելի կը վտանգեն իւրեանց մարմնին: Սուր հիւանդութեանց մէջ զվաւորապէս կը նշմարուին թանջը (տիսանթրիքս), յօղացաւը (րիւմաթիզմ արդի-քիւլէր), ընդհատ ջերմը (ֆիէվրէ Էնթէրմիթանթ), թոքատապ (քնէօմօնի), բայց մանաւանդ անընդհատ ջերմն (ֆիէվրէ

ընդ մի տառն երկու տարեկան տղայ են չարչա-
րել: Այդ լուրը ստուգելու համար տեղական ոս-
տիկանութիւնը խուզարկութիւններ է անում:

Քութայիսից մեզ գրում են որ սեպտեմբերի
26-ին այդ քաղաքի օրիորդական հայոց ծխա-
կան դպրոցում վիճակախաղ եղաւ յօգուտ նոյն
դպրոցի, որից և գոյացաւ 140 ռուբլ գումարը:
Այսպէս թիւած հաջի ֆունտը, 2-րդ տեսակի ար-
ժէ 4 կօպէկ, ոչխարի մսի ֆունտը 10 կօպ.,
տաւարին 8 կօպ., գինին, լաւ տեսակից, թուն-
գին արժէ 50 կօպէկ: Մրգեղէնն էլ շատ է-
ժան է:

Այս տարի, ինչպէս մեզ գրում են, ամեն բան
էժան է իմէթթում: Օրինակ ֆութայիսում այս
րօպէիս թիւած հաջի ֆունտը, 2-րդ տեսակի ար-
ժէ 4 կօպէկ, ոչխարի մսի ֆունտը 10 կօպ.,
տաւարին 8 կօպ., գինին, լաւ տեսակից, թուն-
գին արժէ 50 կօպէկ: Մրգեղէնն էլ շատ է-
ժան է:

Երեւանից մեզ գրում են, «Այստեղի երի-
տասարդները մի խումբ մտադիր է այս օրերս
մի հայոց ներկայացումն առ յօգուտ «Ժուրնալ
դ'Օրիան» լրագրի: Երկրորդ ներկայացումն լի-
նելու է Վարդի (Վանի) երկրագործական ու-
սումնարանի օգտին: Այսպէս այլ քաղաքների
երիտասարդները անշուշտ կը հետեան Նրանի
երիտասարդութեան օրինակին»:

ՄՍՍՍԿՎԱՅԻ մէջ հրատարակող «Русскія Вѣ-
домости» լրագիրը իր վերջին համարներում
նուիրել է մի քանի առաջնորդող յօդուածներ
հայոց խնդրի պաշտպանելուն:

Մեզ գրում են Ղազարի գաւառից: «Այստեղ
աւաղակութիւնները շատ յաճախ են կրկնվում:
Այս ամառը մի քանի հայ գիւղերից կողացվե-
ցան մինչև 30 գլուխ տաւար: Տաւարատերերը
շատ մանգաղով, վերջապէս գտնում են գողա-
ցած անասուններին մի թուրք գիւղում: Նրանք
գանգատ են տալիս տեղիս ղառաւորին, բայց
մինչև այժմ դեռ եւս ոչինչ վճիռ չէ կայացել
գողացած կենդանիների մասին»:

Ստանում ենք անթիւ պօլէմիական յօդուած-
ներ մեր երկրի այլ և այլ քաղաքներից: «Մշա-
կի» դիրքը և մեր խմբագրութեան մէջ դիմելով
նրանք իր անտուգիանքը մեզ միջոց չէ տալիս
տպագրել այդ տեսակ յօդուածներ: Հայը շատ
սիրում է բանական և երկար ու բարակ փիլի-
սօփայութիւններ ամենասամանափակ հասարա-
կական երեւոյթների մասին: Շատ ուրախ և ջը-
նորակալ կը լինէինք, եթէ մեզ աւելի ուղարկ-
վէին լուրեր, փաստեր, իրողութիւններ և ոչ թէ
երկար ու բարակ փիլիսօփայութիւններ:

Թի ֆ օ ի տ), որ առաջնորդն հետ ստէպ մահաբեր
հիւանդութիւնն է պանդուխտներու համար: Ա-
նընդհատ ջերմին յաճախութիւնը մեկնելի կը լի-
նի դիւրաւ երբ մտածենք թէ սա ընդհանրապէս
կը հարուածէ տակաւին մի երկրի օդին չընտե-
լացած (ն օ ն ա ք լ ի մ ա թ է) անձինքն, և այս
պատճառաւ է որ հայաստանից իւրեանց պան-
դուխտներն առաջին կամ երկրորդ տարուան
մէջ թիֆօյէ կը վարակուին:

Մինչդեռ սենեակին տարողութիւնն աւելի
անձինք կը կենակցին, հիւանդներն և առողջներն
անխտիր, միմեկն զարչահոտութեանց անզգայ են,
օդի անբաւականութեան անուշադիր, հպմանց ան-
զգոյշ, բնական է անշուշտ որ տարափոխութիւնն
ստէպ տեղի կունենայ նոցա մէջ: Գիտած եմք
երբեմն որ մի պանդուխտի բնակարանի մէջ ծա-
ղիկ պատահած ժամանակ, սենեակակիցներէ ու-
րիշներն եւ՝ նոյն անտէ վարակեալ են: Նոյն-
պէս կը լինի նաև ամեն տարափոխիկ անտի
համար:

Թէ այս հիւանդներէն քանին կաղապին աւելի
հրաշիւք քան թէ յարմար խնամքներով, հաշիւն
դժուար է տալ, վասն զի մեզ չը դիմեն կամ մի
և նոյն բժշկի չը դիմեն միշտ: Առ ի չը գոյէ
հարկ եղած դեղերուն և խնամքին, մեռնողնե-
րուն թիւն ի հարկէ սովորական համաճարութե-
նէն բարձր է: Շատ անգամ երբ առիթ կունե-
նամք այդ եղկելիներէն միոյն մահձին մերձե-
նալ, արդէն մահը բաղինել է իւր դուռն:

Ներկայօրեայ հիւանդութեանց մէջ այն որ

Ի.Գ.Ի.Ի.Ի.Յ մեզ գրում են: «Մի ամիս առաջ
Սոբոմալուի գաւառի Ալիջան հայաբնակ գիւ-
ղի մի երիտասարդ գիւղացի դաշոյնով հրապա-
րակապէս սպանել է մի այլ գիւղացու, որին
կասկածում էր իր կնոջ սիրելեան լինելու»:

ՆՈՒԻՍԻՅ մեզ գրում են: «Նուխու հոգեոր
ուսումնարանի հոգաբարձութիւնը իր գոյութեան
օրից մինչև այսօր ոչ մի անգամ հաշիւ չէ ներ-
կայացրել հասարակութեանը: Իսկ այս վերջին
տարիները ժողովուրդը մեծ նուիրատուութիւններ
է արել յօգուտ ուսումնարանի: Այդ նուիրատ-
ւութիւնների մասին ոչ մի տեղ հրատարակված
չէ եղել: Ժողովուրդը զուր չէ գանգատուու,
ուրեմն, իր փողերի վատնելու և ի չար գործա-
ծելու մասին»:

Մեզ գրում են որ Նուխու ուսումնարանը,
որ համարեա երկու տարի փակված էր մնացել,
այժմ վերջապէս բացվում է նորից, ուսուցչու-
թեամբ և տեսչութեամբ Մարտիրոս Աբրահա-
մանցի: «Գծադրութիւնը միայն դա է, աւե-
լացնում է մեր թղթակիցը, որ պ. Աբրահա-
մանը վաղուց յայտնի է մեր հասարակու-
թեանը և ոչ ոքից սէր և համակրութիւն չէ
վայելում»:

Վիեննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագիրը տը-
պել է իր վերջին համարներում համակրական
նամակներ Մարտիկի հայոց հասարակութիւնից,
Մոսկովայի հայերից և նոյնպէս մի համակրական
նամակ փարիզից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լրագիրները քաղաւածքներ են արել լօրդ
Գերբիի մի յօդուածից, որով նա աշխա-
տում է անկողմնապահ պատասխան տալ
այն հարցին, թէ ինչպէս կը ներգործի կա-
լուածական նոր օրէնքը իրանդական կա-
լուածատէրերի և ֆերմերների շահերի վրա
և արդեօք կարո՞ղ է նա խաղաղացնել իրան-
դիան: Լօրդ Գերբի այն եզրակացութեան
է հասնում, որ իրանդական հասարակական
կարծիքը կալուածական խնդիրը վճռած չէ
համարում և կասկածելի է, որ կարելի լինի
խաղաղացնել այդ երկիրը, քանի որ իրան-
դիայի պահանջների հիմքը իր սեփական
պարլամենտի ունենալն է: Կառավարու-
թիւնը միայն այն աջողութիւնը ունեցաւ,
որ ապացուցեց Անգլիայի և Շոտլանդիայի

առաւել ստէպ կը հարուածէ մեր պանդուխտներն,
աներկայաբար հիւժական անտէն է:

Հայաստանի գիւղերն, միւս երկիրներու գիւ-
ղերէն չը տարբերի հիւժական անտէն նուազու-
թեան մասին: Գիւղացին առաւել յաջող հան-
գամանաց մէջ լինելով թէ ֆիդիլքական և թէ
մտաւորական կացութեան նկատմամբ, որքան
աղքատ և անկանոն իսկ լինի նրա կենանք, յա-
ճախ չենթարկուիր այդ ուսուցչի հիւանդութեան,
որու մեծ քաղաքաց բնակիչներուն մի քանորդն
կամ գոնէ մի հիւսկերորդն զո՞հ կը գնան: Արդ
ստուգիւ գիտեմք որ Հայաստանի գիւղերուն
մէջ, որք պանդուխտներէն շատին ծննդատեղին
են, հիւժական անտէ գրեթէ անծանօթ է, մինչ-
դեռ Կ. Պօլիս և այլ մեծ կեդրոններու մէջ
գտնվող պանդուխտներու մէջ ստէպ կը նըշ-
մարուի: Սա կարեն երաշխաւորել մեր այն ար-
հեստակիցներն՝ որք Ազգային Հիւանդանոցի
բժշկապետութեան պաշտօնն վարել են: Այն
հաստատութեան տուումներէն նաև յայտնի է որ
հիւժական անտէ այնտեղ զարմանալիներէն մե-
ծագոյն մասն գաւառացիներն են: Եւ երբ մտա-
ծուի թէ պանդուխտ հիւանդներէն շատերն չը
դիմեն այդ հաստատութեան և կը մնան այլ և
այլ տեղեր, երբ մտածուի թէ ոմանք եւս, եթէ
կարող են, կը վերադառնան ի հայրենիս անդ
թաղուելու համար, այն ժամանակ հիւժական
անտէ մեռնողներուն համեմատութիւնն կարելի
է մակարեկել:

Հայ պանդուխտն մի գլխաւոր պատճառ եւ

բոլոր բարեմիտ բնակիչներին իր պատրաս-
տականութիւնը՝ բաւականութիւն տալ իր-
անդացիների պահանջներին, որքան կարե-
լի է: Բայց, աւելացնում Գերբի, մենք կու-
րօքն չը պէտք է վերաբերվենք կատարվա-
ծի հետեանքներին: Մենք կու՞ն սկզբում
ենք և ոչ թէ վերջում: Շատ անգամ մենք
տեսել ենք օտար երկիրների մէջ, թէ ինչ
բանի կարող է հասնել ազգային դրօշակի
տակ սկսված շարժումը: Եւ ահա մենք
պէտք է գործ ունենանք հէնց այդպիսի
շարժման հետ: Լօրդ Գերբի աւելացնում է,
որ ապօրինի չէ իրանդացիների պահանջը
ինքնավարութիւն ունենալու համար, բայց
հէնց որ իրանդիան իր սեփական պարլա-
մենտը կունենայ, այնուհետեւ անկարելի է
արհեստական միջոցներով սահմանափակել
այդ պարլամենտի իշխանութիւնը: Այդ
պատճառով որքան էլ Անգլիան աշխատի
կառավարել իրանդիան իրանդական հա-
կացողութեան համեմատ, այնու ամենայնիւ
իրանդացիների գերակշռող կարծիքը այն
կը լինի, որ իրանդիան կատարելապէս ան-
կախ պէտք է լինի Անգլիայից:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական միսիստրների խորհրդի
մէջ անհամաձայնութիւն է տիրում ապա-
գայ գործունէութեան նախագծի վերաբե-
րութեամբ և հաւանական է, որ միսիստ-
րական դժուարութիւններ կը պատահեն
առաջ քան թէ պատգամաւորների ժողովը
գումարվի: Եթէ Գամբետտային առաջարկի
նոր միսիստրութիւն կազմել, նա մտադիր է
վարել արտաքին գործերի միսիստրի պաշ-
տօնը, իսկ եթէ հարկը պահանջէ, բաւա-
կանանալ ներքին գործերի միսիստրի պաշ-
տօնով: Այս դէպքում միսիստրութիւնը հե-
տեւել կերպով կը կազմվի: Ֆերրի ժողովը
դական լուսաւորութեան միսիստր, Լէօն
Սէ կամ Ժերմէն ֆինանսների, Ֆրէյսինէ
պատերազմական և Սպիւլեր արտաքին գոր-
ծերի միսիստրի օգնական: Բրիսոն պատ-
գամաւորների ժողովի նախագահ կընտրվի:
Քաղաքական շրջանների մէջ համոզմունք է
տիրում, որ Գրեվի վճռել է Գամբետտային
յանձնել նոր միսիստրութեան կազմը և
որ այժմեան միսիստրութիւնը շուտով հը-
րաժարական կը տայ:

տակաւ առ տակաւ սպառնելով նրա կենսական
ոյժերն, թողախտին մի դիւրին որս կը պատ-
րաստէ:

Մնաց այժմ մեզ խօսել մի ուրիշ երկարօրեայ
և ժահրաւոր անտի վերայ որ ամենէն առաւել
մեր ուշադրութիւնն գրաւած է շատ տարիներէ
հետէ և որու ստացումն բժշկականութեան կա-
րողութեան վեր չը լինելով, հետեանքներն եւս
կարող եմք գուցէ նուազ զարհուրելի տեսնել:
Այդ լոկ փոխադրական անտի՝ Ափրդիտեան
անտի է (սի ֆի լի ս), յորմէ մեր պանդուխտ-
ները կարծուածէն աւելի վարակուած են, և
որու անմիջական և հեռաւոր հետեանքներն եւս
քան զնա զգալի կը լինին դժբաղաբար:

Ասացինք թէ հայ գաւառացին իւր ամենէն
առողջ հասակին մէջ կը պանդուխտ մեծ քաղա-
քներն և կը մնայ անդ հինգ, տասն և աւելի եր-
կար տարիներ, հեռու ընտանեկան սփոփանքնե-
րէ և յրջապատեալ այն ամեն զղուելի հրապոյր-
ներէ՝ որք զհոգին կարատեն և զմարմինն կա-
պականեն: Մի միայն բժշկականութեան սահմա-
նին մէջ մնալով, չեմք կարող անդառնալի մի
դատապարտութեան վճիռ արձակել նոցա դէմ՝
որք ըստ բաւականի չունին կամաց զօրութիւն
ամեն կողմ լարուած թակարդներէ խոյս տալու
համար: Իբր բարոյագէտ, ձայնակից կը լինիմք
ամենուն, ժողովրդեան վարքն ու բարքն ուղղե-
լու համար, բայց իբր բժիշկ՝ էութիւնն հաստա-
տելով կը գոհանամ և կանցնիմք:

Ֆրանսիական օֆիցերները, որոնք վերա-

հաւանական օֆիցերները, որոնք վերա-
դարձան ֆարիզ Նանտի մէջ եղած գորա-
խաղերը տեսնելուց յետոյ, շնորհակալու-
թիւն են յայտնում այն զեղեցիկ ընդունե-
լութեան մասին, որ արին նրանց ֆրան-
սիական զինուորականները, մանաւանդ զօր-
քերի հրամանատար Զան: Զօրախաղին ներ-
կայ էին շվեդական, բելգիական, աւստրիա-
կան և ռուսաց օֆիցերներ: Գինեւրալ Զան,
գիմելով գերմանական օֆիցերներին, ասաց
մօտաւորապէս հետեւալը. «Գերմանիան
մի մեծ պետութիւն է, որ յայտնի է թէ
պատերազմական և թէ խաղաղ գործերով:
Ես յոյս ունեմ, որ Ֆրանսիայի և Գերմա-
նիայի ժառանգական թշնամութիւնը հետգ-
հտէ կոչնչանայ և տեղ կը տայ աւելի լաւ
յարաբերութիւններին երկու դրացի ժողո-
վրդներէ մէջ: Ես այդ ցանկանում եմ մա-
նաւանդ այն պատճառով, որ ես ինքս չը-
ռենտի ափերի մօտ եմ ծնված»:

Փարիզի մէջ մի ժողով կայացաւ, որ
հրաւիրված էր անհաշտների մամուլից: Ժո-
ղովի նպատակն էր պահանջել, որ այժ-
մեան միսիստրութեան անդամները դատա-
տանի ենթարկվեն: Չը նայելով յեղափոխա-
կան մամուլի եռանդոտ ազդարարութիւն-
ներին, ժողովը բազմամարդ չէր: Խօսողնե-
րից մէկը ասաց, որ փոխանակ միսիստրների
հետ քաղաքավարութեամբ վարվելու, պէտք

Ափրդիտեան անտի ուրեմն պանդուխտներու
կացութեան բնական բերմամբն մէջերնին վա-
րակուելով զարհուրելի հետեանքներ յառաջ կը
բերէ այս ժամուն: Այս անտի իւր երկարօրեայ
և տարափոխիկ կրկնակի յատկութիւններով կը
կատասեռէ նաև վարակուողի կենակիցներն և
սերունդն: Այսպէս նա մուտք գտած է Հայաս-
տանի ամեն զգալի ընտանեաց մէջ, ուր ներ-
մուծած են մեծ քաղաքներէ վերադարձող պան-
դուխտներն: Մեր արհեստակիցներէն նոքա որք
պաշտօն վարած են Արմենիոյ մէջ, հաստատել
են մեզ թէ, մանաւանդ մի քանի գիւղերէից
մէջ, ճիշդ այն գիւղերն որոց որդիքն կը պան-
դուխտ, Ափրդիտեան անտի ճարակած է յոյժ
և թէ վարակեաներն անխնամ կը փոխն:

Այս է ահա այն սոսկալի վտանգն որ ընդար-
ձակել կը սպառնայ Հայաստանի ժողովուրդի
մէջ: Սա անուղղակի կերպով և տարբեր ձևերով
նաև կը կատարէ իւր ապականարար դերն: Եթէ
սերունդն չը ժառանգէ միշտ զայն, նորա իբր
հետեանքները կունենայ յայնմանէ ոչ նուազ
նուաղեցուցիչ անտի, ինչպէս են խոյն, կար-
կինոն (քանսէր), հիւժական և ուրիշներն:
որք առողջ և քաջաւոր մի ժողովուրդ կարող
են թիւ միջոցի մէջ աշխատել:

Այս անտի անխնամ մնալուն մէջն է իւր գո-
րութիւնն: Եթէ ներկայ ժամանակին մէջ Ափր-
դիտեան անտի կորուսել է իւր վաղեմի աղետա-
բեր սաստկութիւնն, եթէ միջին դարու անտի
տեսարաններն ոչ եւս կը կրկնուին մեր օրերով եւ-
րօպայի մէջ, սորա միակ պատճառն նորա ստաճ-

է նրանց ժանդարմներն ուղեկցութեամբ դատարանը ուղարկել, որպէս զի յետ անուսի նրանցից այն փողերը, որոնց նրանք գողացել են: Մէկ ուրիշը ապացուցանում էր, որ յեղափոխութեան զարգացման արգելքը դամբնատան է: Պէտք է նրանց անպատճառ ազատվել ու, եթէ հարկաւոր լինի, նրա դէմ յեղափոխական միջոցներ գործադրել: Հէնց որ բուրժուականները կը զրկվին իրանց առաջնորդից, սոցիալական յեղափոխութիւնը ինքն ըստ ինքեան կը կատարվի: Վերջը ժողովը մի վրձիւ կայացրեց, որ միւստորներին դաւաճան և կաշառակեր է անուանում:

ԳԵՐՄԱՆԻԱ

„National Zeitung“ լրագիրը թիւրքիայի բաժանման վերաբերութեամբ յօդուածի մասին նկատում է հետեւեալը: «Ամենից շատ զարմանալի է այն, որ „Times“ լրագրի նախագիծը գիմում է այնպիսի մի պետութեան, որ ամենից շատ յայտնի է իր խաղաղասիրութեամբ և բոլորովին չէ ցանկանում ընդարձակվել, որ զբաղված է գլխաւորապէս իր ներքին գործերի կարգադրութեամբ: Ակամայից միտք է ծագում, որ „Times“ լրագրի առաջարկութիւնը ուղղված է ոչ թէ աւստրիական կառավարութեանը, այլ Ռուսաստանին և թիւրքիային: Գոց է Բ. Գրանը կամենում են հասկացնել, որ, եթէ թիւրքաց պետական մարդիկ ի նկատի չեն առնի Անգլիայի շահերը եղիպտոսում, Անգլիան կարող է թիւրքայից վրէժխնդիր լինել, իսկ Ռուսաստանին հասկացնել, որ հարկաւոր դէպքում Անգլիան պատրաստ է տալ նրան Կ. Պօլիսը Կայիրէի և Ալեքսանդրիայի համար: „Times“ լրագրի յօդուածից կարելի է եզրակացնել, որ Անգլիան պատրաստ է ի նկատի առնել եւրօպական քարտէզի ամեն տեսակ փոփոխութիւնը, միայն թէ նա ապահոված լինի չնդկաստանի և եղիպտոսի կողմից: Մենք չենք կարծում, որ ներկայումս կարողանան տեղ ունենալ այդպիսի առաջարկութիւններ, այնու ամենայն „Times“ լրագրի յօդուածը մի նախազգուշութիւն է, որ ցոյց է տալիս, որ պէտք է Անգլիային շատ զրգուել: Ով որ ճանաչում է Զարլզ Գիլի

անձնաւորութիւնը, նա կարող է իմանալ, թէ այդ միւստորը ինչքա՞նչ կարող է անել: Առհասարակ աններելի սխալ կը լինէր վատ կարծիք ունենալ Անգլիայի ոյժի և եռանդի մասին այն դէպքերում, երբ հարցը նրա շահերին է վերաբերում: Ֆելդմարշալ Մօլտկէ Կիլի նաւահանգստի բացման ժամանակ արտասանեց հետեւեալ ծառը: «Այն բոլոր պարտականութիւնները, որ զրկած են իւրաքանչիւր քաղաքացու վրա, ամենանշանաւորը զրկած է զինուորական դասի վրա, որ պէտք է պաշտպանի իր հայրենիքի սահմանները: Կրա համար պաշտպանողական երկու բաժիններ կան՝ զօրքերը և նաւատորմը: Եթէ հարեանցի կերպով նայենք, այդ երկու բաժինների կուշուները զանազան են: Խաղաղ ժամանակ պէտք է պատրաստվին ապագայ յաղթութիւնների հիմունքները: Պատերազմական մարդիկ այդ ժամանակ ապրում են իրանց հայրենի հողի վրա և միայն կարճ ժամանակով իրաւունք ունեն այնտեղից հեռանալու համար: Ծովագնացները ընդհակառակը հէնց խաղաղ ժամանակ պէտք է պաշտպանեն իրանց երկրի պատիւը հեռուործովերի վրա, պէտք է պաշտպանեն օտար երկրներում ապրող իրանց հայրենակիցներին և ապահովեն զերմանական անուան հիգիւնակութիւնը: Պատերազմի ժամանակ հայրենիքի պատիւը զօրքերին է յանձնվում, մինչդեռ նաւատորմի զլխաւոր կուշումն է հայրենի ափերի պաշտպանութիւնը: Բայց կուշուների այդ պաշտպանութիւնը միայն երեւակայական է. իսկապէս այդ երկու բաժիններն էլ կարողանում են հասնել իրանց նպատակին միայն այն ժամանակ, երբ եղբայրաբար ձեռք ձեռքի տուած են դնում: Պատերազմական նաւերը միայն այն ժամանակ կարող են աջողութեամբ պաշտպանել Գերմանիայի ափերը, երբ վերջինները նրանց համար լաւ ապաստան են կազմում, որ նրանք կարող են գալ, ինչպէս թուշուները իրանց բները, իսկ թուշուները իրանց բները շինում են ապահով տեղերում: Ուրեմն մեր ծովագնացների բներն էլ պէտք է ապահով լինեն և այդ պատճառով նաւատորմի և զօրքերի մէջ միութիւնը անհրաժեշտ է: Թէ զօրքերը և թէ ծովագնացները միատեսակ սիրում են իրանց

հայրենիքը և կայսրին: Նրանց նպատակն էլ մէկ է և այդ նպատակին նրանք կարող են հասնել միայն այն ժամանակ, երբ եղբայրաբար ձեռք ձեռքի տուած կաշխատեն:»

ԻՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Կամենայով յարգել Գարֆիլդի յիշատակը Թերանկոնտ ամերիկական քաղաքը վճռել է Գէյստոսի սարը անուանել Գարֆիլդ: Պէտք է ասել որ ուղիղ այդ սարի մօտ գտնվում են նոյնպէս երկու ուրիշ սարեր, որոնցից մինը Լաֆայէտ, իսկ միւսը Լինկոլն անուն է կրում:

Ամերիկայի Գօրթէս նահանգը իր քաղաքների թուում հաշուում է զարձեւալ մի նոր քաղաք, Գիւլրանգօ անունով, որ միայն տասն ամիս է որ գոյութիւն ունի: Չը նայելով այդ կարճ ժամանակամիջոցին, քաղաքն ունի արդէն 40 փաստաբաններ, երեք ամենօրեայ թերթեր, եօթ հիւրանոցներ, երեք հատ փոխատու բանկ, երեք դեղատներ, ինչպէս ասկերիւնների խանութ, ինչպէս մանրավաճառանոցներ, չորս հատ օղիի գործարան և մահուկի մի գործարան: Անա ինչպէս են կազմվում և զարգանում քաղաքները Ամերիկայում. այդ երևոյթը ամենալաւ ապացոյց է Ամերիկայի ներքին տնտեսական ոյժի:

Այս օրերս Ս. Պետերբուրգի յայտնի մի ատամնաբույժի հետ մի շատ զարմանալի դէպք է պատահել: Սովորական ժամին, երբ բժիշկը իր տանը հիւանդներ է ընդունում, մոտում է նրա մօտ մի շատ գեղեցիկ և չքեղ կերպով հագնված երիտասարդ կին, յայտնելով որ կամենում է իր հիւանդ ատամներից մինը հանել տալ Բօխլը նստացնելով տիկնոջը քաղկաթոսի վրա, պատրաստվում է ատամը հանել, բայց յանկարծ հիւանդը տեղից վեր թռչելով, գրկում է բժիշկին և արտասուքը աչքերին խոստովանվում է որ եկել է ոչ թէ ատամը հանել տալու, այլ իր սէրը, որ իրան ամեն բան մոռանալ է տալիս, բռնաբանելով յայտնելու համար: «Ես ձեզ վաղուց է որ սիրում եմ, ասում է տիկինը, բայց դուք ինձ վրա ոչինչ ուշադրութիւն չէիք դարձնում:» Երկու ատամաբույժի բժիշկը հիացած՝ հանգստացնում է տիկնոջը, ասելով որ թէ և ինքն մինչև այժմ երբեք նրան պատահած չէ, բայց այս մի քանի րոպէները բաւական են իր մէջ անսահման սէրը վաւերութեամբ հրաշալի դեղեցկութիւն: Սիրոյ զգացմունքը յայտնելու ամենալաւ ժամանակ, կինը վերկենալով յայտնում է որ պէտք է շտապի դէպի տուն, որ նրան սպասում է խանդոտ ամուսինը, բայց մի և նոյն ժամանակ խնդրում է բռնաբանելու միւս օրը այս ինչ ժամին գտնվել այս ինչ տեղը: Սիրահարված բժիշկը ճանապարհ է գցում տիկնոջ մինչև ասանդուխտները և վերադառնում

է իր սենեակը, Բայց որքան զարմացած էր նա, երբ մի կէս ժամից յետոյ ձեռքը դէպի ժամացույց տանելով, նկատում է որ գեղեցիկ ոսկէ շղթան կտրած է և ոսկէ ժամացույցը անհետացած է: Այդպիսով յայտնվում է որ այդ տարօրինակ ձեռք իր սէրը յայտնող կինը եղել է մի հասարակ գող:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 հօկտեմբերի: «Пра-вит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է: Մեծ Խշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ իր ամուսնի հետ հօկտեմբերի 4-ին վերադարձաւ Ս. Պետերբուրգ: Անուանի Բարձրագոյն հրամանով Կոմս Վալուեւի իր խնդիրքի համեմատ հիւանդութեան պատճառով արձակված է միւստորների մասնաժողովի, Կովկասեան մասնաժողովի, խնդիրների մասնաժողովի նախագահական պաշտօններից, մնալով պետական խորհրդի անդամ, ստատուսեկրետարի և պատուաւոր հոգաբարձուի կուշուների մէջ: Միւստորների մասնաժողովի նախագահ նշանակված է Բէյտերն: Մի և նոյն ժամանակ Բէյտերն ժամանակաւորապէս կը նախագահէ գիւղական ազգաբնակչութեան գործերը կարգադրող մասնաժողովին: Խնդիրների մասնաժողովի ժամանակաւոր նախագահ նշանակված է իշխան Գօլգորուկով: «Новое Время» լրագիրը հաղորդում է. էկսպերտների նիստը հօկտեմբերի 5-ին սկզբնական հարցեր չը վճռեց: Խմիչքների խանութները յանձնելու մասին մեծամասնութիւնը կարծում է ամուրդով տալ: Գուէարկութիւնը յետաձգված է մինչև չորեքշաբթի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 հօկտեմբերի: Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ռ. երկրորդ 92 ռ. 50 կ., երրորդ 93 ռ. 75 կ., չորրորդ 92 ռ. 75 կ., ներքին առաջին 50% փոխառութեան տոմսակը արժէ 224 ռ., երկրորդ 218 ռ., արեւելեան տոմսակը փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 75 կ., երկրորդ 90 ռ. 75 կ., երրորդ 90 ռ. 75 կ., ոսկի 7 ռ. 64 կ.: Բուսաց 1 ռ. Լօնդօնի վրա արժէ 26,3 պէնս, Ամստերդամի վրա արժէ 26,3 պէնս, Բուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 222 մարկ: Փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող Գ.Բ.Գ.ՈՐ ԱՐՄԻՐՈՒՆԻ

ման եղանակին վերջին կատարելութեան և ստուգութեան հասնելն է և ոչ այլ ինչ: Որտեղ նա չը հալածուի այժմ, նոյնն է մնացել ճշդ: Թող դարձին այսօր ամեն հողատարութիւնը այս ախտին տապալման համար, թող փափակ Ներսիսի մասնաւոր հիւանդանոցը, խորհրդանոցը, և հիւանդութիւնն իւր զուլան կը բարձրացունէ դարձեալ և նոյն կոտորածն կանէ ինչ որ կանէր երբ, պզգաւ այցելու, անցաւ Ամերիկայէն Ներսիս:

Ինչ միջոց ունի հայ պանդուխտն, գոնէ նորա ճիրանին մէջ անկնելէ վերջն, իւր նախկին առողջութիւնն և մաքրութիւնն գտնելու համար: Գրեթէ ոչինչ: Նա երկար ժամանակ կը մնայ անխնամ, ժահրն կը պատէ մարմնոյն ամեն կողմն, և ապա, ճարն հատած, կը դիմէ այն չաղակրատներէն միոյն որք կալաթայի և Կ. Պօլսոյ կողմն կեռան յուսահատելի առատութեամբ: Ինչն ախտէն աւելի չարագոյն: Ազգային հիւանդանոցի դռներն գոց են իրեն համար, զի հիւանդէ առաջ նա մեղաւոր կը նկատուի: Ամթխածութիւնն, անհոգութիւնն կարգի են դրին, զիմելու անմիջապէս ծանօթ բժիշկներէն միոյն, որք չը զլանան երբեք իւրեանց խորհուրդն և օգնութիւնն, և երբ մեք առիթ կուենամք ի վերջէ հանդիպելու մի այնպիսի թշուառի, շատ անգամ ախտն արմատացել է և դայն իւրին դեռուարին: Ի՞նչ սակայն եթէ այս մասին օգնութիւններն դուրս և մատչելի լինէին, քանիներն

կազատէին այդ փտեցուցիչ ախտէն, իւրեանք և իւրեանց սերունդներն:

Սուր և երկարօրեայ սովորական հիւանդութեանց համար գոնէ Կ. Պօլսոյ մէջ կայ մի խնամող հաստատութիւն, թէպէտ և խիստ անբաւական: Սակայն հիւանդանոցներն, որքան և ընդարձակ լինին, մի քաղաքի մէջ երբեք չը բաւեն ամեն կարօտեալ հիւանդի օգնելու համար, եթէ նոցա չը ստատուին մասնաւոր խնամատու ընկերութիւններ, որք հիւանդն իւր քնակած տեղն զարմանելու կը զբաղին: Վատ բան է հիւանդանոցն, բայց մի հիւանդանոցի մէջ տաւապիլն աւելի դժոյղակ է:

Հիւանդ հայ պանդուխտներն գտնել և խնամելու համար մի փոքրիկ ընկերութիւն անհրաժեշտ է Կ. Պօլսոյ մէջ, և այս ընկերութիւնն կանանց վայելուչ է որ կազմեն: Այսպիսի մի ընկերութեան բարոյական ազդեցութիւնն ևս մեծ կը լինի պանդխտաց վերայ: Վասն զի կը զգան այն ժամանակ թէ ոչ ևս անտէրունջ են նման բարիանելու: Հայաստանի խորքերն բնակող մեր ազգակիցներուն բարեբաղն մոտեցել կեննեմք, և չը տեսնեմք նոքա որք մեր սեւամիտ վերայ կեցել են հիւանդ և լըքալ: Ինչպէս մենքն որ այս ընկերութիւնն ներք կազմելու տարօրինակ տենդի ժամանակ հայ կանայք և օրիորդք տակաւին իւրեանց ուշադրութիւնը չեն դարձուցել այս կողմ, և սասկոյն նոյնպիսի առաքելութիւն և ազգասիրութիւն է հիւանդ հայ պանդուխտին օգնութեան

հասնելն, որչափ դիւղային դպրոց բանալն և պարգասիրութիւնն:

Իսկ Ամերիկայի ամառին վերաբերմամբ, մեք կարծեմք թէ կարող եմք առաւել եւս մաքրել նաև նորա դէմ և ջանալ որ իւր հարուածներն այնչափ ուժգին չը լինին:

Եւ նախ պէտք է որ մեր ժողովրդական լրագիրներն երբեմն զգուշացնեն պանդուխտներն որ այդ ախտն ստանալու վտանգներուն վրէժիկին: Սա բարոյազէտի պարտն է զոր անհերքելի է զլանալն: Պէտք է ապա որ քահանայական դասն խրատեն պանդուխտներն այս մասին, և այս քարոզութիւնն աւելի ազդեցութիւն կը ստանայ կարծեմք եթէ քահանայներէ աւելի վարդապետք անեն: Սոցա ձայնն աւելի լըքալ կը լինի, վասն զի կը միացնեն խրատն ողջխոսութեան բարի օրինակին հետ: Լաւագոյն է զգուշանալ քան բուժել, կասեն իրաւամբ:

Իսկ լոկ բժշկական տեսակէտով, պէտք է որ սկզբմամբ, ազգովին, վճառ լինիմք այն խեղճերուն անօգնական թողութիւն: Պէտք է արտօնութիւն տրուի ազգային հիւանդանոցի վարչութեան ընդունիլ և այս ախտէ վարակեալներն: Բժշկապետն յատկացուի օրեր պէտք է տայ իր խորհուրդն անդ ներկայացողներուն և պէտք է որ դեղերն ձրի ապէս հայթայթուին: Այդ հիւանդներէ խիստ մեծագոյն մասն ոտքի վերայ են և պէտք չունին հիւանդանոցի բեռ լինելու: Իսկ նոքա որք անկարող են յայտատելու, պէտք

է որ այն յարկէն արտաքսուին: Նոքա իւրեանց մեղք տուիլ են և չարաչար տուիլ: Հիւանդանոցներու մէջ գտնուողներն չափերն տեսակ տեսակ ժողովեանց հետեանքն անկած են անդ, և ոչ քր մտածել է քննել նախ իւրաքանչիւրի բարոյականութեան աստիճանն և ըստ այնմ ընդունիլ կամ ոչ: Իսկ եթէ կը կարծուի որ Ամերիկայեան կամ նորա նման ախտէ վարակեալ հիւանդներն գայթակղութիւն կը լինին մեր ազգային հիւանդանոցի պարկեշտ պատուարեաններուն, այն ժամանակ դէպքին է մասնաւոր մի տեղ յատկացնել նոցա այն յարկէն հետի:

Գիւրին է, ասացինք, մոռանալով մեր միակ բարեբաղնական հաստատութեան ողորմելի վիճակը, հակառակ նորա անձնուրաց շոգաբարձութեան ջանից, Երբ Կ. Պօլսոյ հայ հասարակութիւնն պիտի համոզուի թէ ամեն օգտակար գործ չէ կարելի կատարել, եթէ նա այսպէս ժխտ զըտուելու—անխիղճ պիտի ասէինք—, և թէ աղքատին և պանդուխտին վիճակն բարելաւելու համար ամեն ջանք, ամեն խորհուրդ անօգուտ են եթէ նիւթապէս չաջակցի ժողովուրդն:

Անա երկու առաջարկութիւնք ևս, որ մեր արհեստական, մարդկային պարտաւորութիւններն թելադրեցին զմեզ անել:

Արձագանք գտնեն պիտի ճարակուելի է:

S. ՓԵՏԵՐԲՈՒՐԳԵԱՆ